

ՄԱՐԳԱՐԻՏ

ԿՈՒԽԻԴԱՅԻ ԳԱՆՁԵՐԸ



ՊԵՏԼՐԱՆ





Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ

✓

891.99

Ն

ԿՈՆԽԻԴԱՅԻ ԳԱՆՁԵՐԸ

Զ Ր Ո Ւ Յ Ց Ն Ե Ր

ՇԱԳԻԿԸ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
ՆԿԱՐՆԵՐԸ Վ. ԳԱՅՅԵՃՅԱՆԻ

A II / 15693



ՄԵՏՐԱՆ

ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1 9 3 8



Б С С Р
Дзяржбібліятэка
імя В. І. Леніна
№ 10670

ՆԱՄԱԿ ԲԱՓՈՒՄԻՑ

Դա Աջաբխալում էր. կարուխաի ծովափնյա գե-
ղեցիկ փոյրերում, ցխարուտային մշակույթների մեջ:
Բազմաթիվ մանղարինի, նարնջի, կխարանի
լիմոնի/լալարազեղ ծառերի ճղները կախվել էլին



Նկ. 1. Կարտուխախանները խնամում են նոր տնկած մառ-
դաշ տունկերը, ջրում ու կարգի բերում:

Հասած դեղինագույն սրաուզներով: Մեծ, փոքր, աղա-

մարդ, կին ծառերի տակ անուշահամ գեղեցիկ մրգերը քաղում լցնում եյին կողովների մեջ:

Մանդարինով լիքը կողովները տանում, թափում եյին ավառների մեջ, վոր կանգնած եյին այդու դռանը:

50 հազար մանդարին, 70 հազար, 80 հազար,— տեարի մեջ նշանակում եր հանձնուղը:

— Մննդարար ու անուշահամ պտուղներն իր սեղանի վրա ունենալու յե մեր խորհրդային ամեն մի բանվոր, թող բոլորն ոգտվեն մեր կոլխիզայի գանձերից, ասում եյին կոլտնտեսականները:

Ամեն կողմ գիտելուց հետո մենք վերադարձանք ծովափ: Որը շոգ եր: Լողացանք, հանգստացանք ծովափին:

Տուրիստների տան վարիչը մեզ նախաճաշիկով հյուրասիրեց:

Լավ կերանք, Վամեցինք ու հանդստացանք:

Մեր ղեկավարը խոստացաւ մյուս անգամ մեզ տանել եքսկուրսիա գեպի թեյի պլանտացիաները: Մնդրել ենք մեր ղեկավարին, վոր մենք եյ մեծերի հետ մասնակցենք թեյահավաքին:

Յերեվանի հոկտեմբերիկնե՛ր, դուք ել մեզ գրեցեք, թե ի՞նչ եքսկուրսիաներ եք կատարում, ինչպե՞ս եք ոգնում մեծերին:

Հոկտեմբերիկյան վողջույններով՝

Ձեր ՄԱՐԳԱՐԻՏ

Բաթումի

ԱՆՈՒՇԱՀԱՍ ՑԻՏՐՈՒՍՆԵՐԸ


Հունվարի ցուրտ, բուք որերն եյին:

Ձյունը սպխտակ փաթիլներով թափվում, ծածկում եր Բաթումիի ցիտրուսային ծառերի մշտագալար տերեւները:

Ցիտրուսային անհամար ծառերը ցրտից կարող

եյին վնասվել: Կոլտնտեսականներն այդ ցուրտ գիշեր-
ները չեյին ջնում, ցիտրուսային լայնատարած մշա-
կույթներում խաբույկներ եյին վառել. ուր, շրջա-
պատը, ծառերը բռնված եյին թանձր անպանման
ծխով: Այդպիսով, ժրջան կոլտնտեսականներն ար-
հեստական միջոցով ցրտից պաշտպանում եյին թան-
կարժեք, անուշահամ ցիտրուսները: Մի քանի ուր
այդպես շարունակվեց, ապա նորից որերը տաքացան,
այլևս կոլտնտեսականները չեյին անհանդստանում:

Ուր տաքացավ, ձյունը հալվեց, դաշտերը բաց-
վեցին, յերեխաներն ուրախ յերգելով վազվզում եյին
պուրակներում:



Նկ. 2. Ծաղկած ծառերը փրկելու նպատակով կոլտնտեսա-
կանները խաբույկներ են վառում և ձյունը հալցնում:

Բուրավետ մանուշակն արդեն բացել եր իր կա-
պույտ աչիկները:

Բացվել էր նաև սպիտակ զանգակիկը:

Թվերի վրա գեղեցիկ ու փարթամ բացվել էին կարմիր, սպիտակ, վարդազույն ու գեղին կամեյները:

Յերեխաները ծաղկեփնջերով շապում էին դրպոց:

— Ընկե՛ր Հասմիկ, տեսե՞ք մանուշակը, ճնձաղիկը, կամելը բացվել են. դարուն ե արդեն—ատում էին նրանք հրճվանքով:

— Վո՛չ, դարունը դեռ չի յեկել, յերեխաներ, բայց Սել ծովի գեղեցիկ ափերին ձմեռը մեղմ է լինում ու դարնան պես հաճելի, դրա համար ատում ենք մեզ մոտ մերձարեւադարձային կլիմա յե, վորտեղ ալյքսոն շատ անուշահոտ, անուշահամ ցիտրուսներ են աճում:

— Ո՛հ, ինչ հարուստ է մեր հայրենիքը, վո՛րքան գեղեցիկ,—ասացին փոքրիկները, ծաղիկները կրճքեբին սեղմած:

ՓՈՔՐԻԿ ՀՅՈՒՐՆԵՐԸ ՅԻՏՐՈՒՍԱՅԻՆ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ալտոն արագ սլանում էր, յերեխաները ծիծաղում էին, քրքշում, ծափ տալիս, թաչիկնակներն ողում ծածանում:

Հասան խորհանտեսություն: Վաչիկի հայրը բանվորների հետ ցիտրուսային բույսերի մեջ էր: Նրանք ցիտրուսային նոր տուններ էին անկում...

— Հայրի՛կ յեկանք, դեռ հեռվից գոռաց Վաչիկը: Փոքրիկները ցած իջան ավտոյից, շարքերով գնացին բարեմեցին Վաչիկի հայրիկին ու բանվորներին:


Վաչիկի հայրը շատ ուրախացավ և ասաց.

— Տեսնո՞ւմ եք, իմ փոքրիկ հյուրեր, արդեն ձմեռ է, բայց ցիտրուսային բույսերը մշտադալար տերեփներով են դարձարված: Մեր յերկրի կլիման խոնավ է: Սժուան գիշերներին հաճախ ցող է իջնում դետնին: Հողը կարմիր է, ավազախառն ու բնականից պարարտ, արեփն էլ ալյուղ է և ջերմությունը շատ: Ձմեռը մեղմոտ մեղմ է լինում. յեթե ջերմությունն իջնի մինչև 16 աստիճան, մեր ցիտրուսային բույսերը կփչանան:

Վաչիկի աչքերը ժայլեցին, նա բացականչեց.

— Հա, հայրի՛կ, մեզ տար պահեստը, այնտեղ շա՛տ—շա՛տ մանդարին, նարինջ կա:

Պահեստը մեծ, լուսավոր մի շենք էր, վորտեղ բանվորուհիները նստած ջուրում և թղթերի մեջ էլին լիաթաթում մանդարինները, նարինջները և կիտրոնները, իսկ հետո դարսում արկղներում:



Նկ. 3. Անուշահամ մրգերը փաղում ու լցնում են կողովների մեջ ու քափում ավտոների մեջ:

— Վորջան շա՛տ մրգեր կան այստեղ, վորջան մանդարին, նարինջ:

— Ի՞նչ էք անելու այս բոլորը, — հարցրեց Գնաբիկը:


— Այս ցիարուսային պտուղներն ուղարկում ենք մեր խորհրդային հանրապետութունների բոլոր աշխատավորներին և նրանց յերեխաներին, — ասաց մի բանվորուհի, — իսկ դուք մանդարին, նարինջ և կիտրոն սիրո՞ւմ եք:

— Սիրում ենք, շատ ենք սիրում, — բացականչեցին յերեխաները:

— Իմ փոքրիկներս, դուք սիրում եք, վորովհետև այդ հոտավետ պտուղները շատ համեղ են և հյութեղ, — պատասխանեց բանվորուհին և ապա ժպտալով շարունակեց, — մանդարինը, նարինջը, կիտրոնը և մյուս ցիտրուսային պտուղներն իրենց մեջ ունեն մի շատ ոգտակար հյութ, վորին աւում են «վիտամին», վորը շատ անհրաժեշտ է մարդու որդանիզմին, մանավանդ փոքրիկներին: Հիմա դնանք սեղանատուն և անուշ արեք այդ ոգտակար պտուղները:



Յերեխաները նստեցին սեղանների շուրջը: Ափսոսներով բերին ցիտրուսային մրգերը և նրանցից պատ-



Նկ. 4. Կոլտնտեսականները մանդարինները ջրկում են, յերեխաները նայում են:

բատոված քաղցրավենի: Ամեն մի յերեխոս ստացավ իր բաժինը:

— Այսօր դուք մեր լավ հյուրերն եք, կերեք, օւրախացեք, — աւայցին բանվորուհիները:

Վաչիկի հայրն ավելացրեց, — ահա տալիս եմ ձեր մանկապարտեզի նախաճաշի համար մի կողով ման-
դարին: Իսկ հիմա ինչքան դւզում եք կերեք:

Յերեխաները կուշա կերան:

Ժամանակն եր տուն վերադառնալու: Յերեխա-
ները հրաժեշտ տվին Վաչիկի հայրիկին և բանվորու-
հիներին ու բոլորն ավտո նստեցին: Մի կողով ման-
դարինը դեկավարը տեղափոքեց իր մոտ: Ավտոն սլա-
ցավ ասվայտով ծածկված հարթ ճանապարհով:
Փոքրիկ եքսկուրսանտները շատ ուրախ էյին: Ուրա-
խանալու ինչքա՞ն բաներ կան...

ԹԵՅԻ ԴԱՇՏԵՐՈՒՄ ՈՒ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Փոքրիկ Վաչիկն ամեն ոք գնացքով դալիս եր քա-
ղաք, դպրոցում սովորելու: Նրա հայրը Չաքվայի
Թեյի գործարանի դիրեկտորն եր: Բաթումից մինչև
Չաքվա գնացքով 20 րոպեյի ճանապարհ է:

Վաչիկն իր ընկերներին պատմում եր Չաքվայի
հարուստ բուսականության, իրենց տան շուրջը ծաղ-
կած անթիվ ծաղիկների և մանավանդ Թեյի պլանտա-
ցիաների և գործարանի մասին:

Աչնան սկիզբն եր: Մի պարզ, արեվոտ առավոտ
Վաչիկը իր դասընկերների և ուսուցչուհու հետ գնացք
նստեցին ու գնացին Չաքվա—եքսկուրսիա:

Չաքվայի կայարանում շատ սիրալիր դիմավորե-
ցին յերեխաներին:

Յերեխաները նստեցին ծաղկեփնջերով դարդար-
ված, սպիտակ սիւռոցներով ծածկված սեղանների
շուրջը, նախաճաշ արին և հյուրասիրվեցին Չաքվայի
բուրավետ Թեյով:

— Իսկ այժմ շարժվենք, փոքրիկ ընկերներ, —




ասաց զիրեկտորը, — դեռ առաջ դնանք պլանտացիաները, մեր թեյի մշակույթները տեսեք:

Յերեխաները դնացին թեյի պլանտացիաները: Նրանց աչքերի առաջ բացվեց մի սքանչելի տեսարան:

Մշտադալար թեյի թփերը փարթամ փնջերով, շատ կանոնավոր շարքերով տարածվում էին հեռու, հեռու, դեպի բլուրները:

Կարմրադեղին, խոնավ հողամասերում թեյի թփերը, կանաչ յերանդներով աչնան արևի տակ շողշողում էին, նրանց վրա բացվել էին քնքուշ ճերմակ ծաղիկներ. և շատ թփերի վրա փայլում էին արդեն հասած սերմերը՝ կաղինի մեծությամբ:

Անթիվ կանաչ թեթև հալոտատներով, լայնեզր ծղոտի գլխարկներ ծածկած աշխատում էին թեյի թփերի մեջ:



Նկ. 5. Թեյի պլանտացիա:

Բլուրներից ցած, հեռուն տարածվում էին կապույտ ծովի ջրերը:

— Յերեխաններ, հիմա լսեցե՛ք, — ասաց զիրենկատորը, — թեյի թուփը «կամեկիս» կոչված բույսի բնտանիքից ե: Ինչպէս տեսնում եք, այդ թուփը կարծր մշտադալար տերեւներ և սպիտակ ու քնքուշ ծաղիկներ ունի. բազմանում և սերմերով: Թեյի թուփը ծաղկում և աշնանը, իսկ հաջորդ աշնանը հասնում են սերմերը: Թեյի մատղաշ տերեւները հալաքում են մայիս ամսից մինչև նոյեմբեր ամիսը: Թեյի թփերը բուսնում և բազմանում են մերձարևադարձային յերկրներում, գեղնախարմիք խոնավ հողամասերում, ասք, բարեխտոն կլիմայում: Թեյը քնքուշ բույս և ցրտի ու սառնամանիքի չի դիմանում. 12 աստիճան ցրտից չորանում և:

Մեր յերկրի թեյն իր բարձր վորակով, անուշահամությամբ և իր գույնով, դերազանցում և Չինաստանի, Ճապոնիայի թեյերին, — բացատրում եր զիրենկատորը:

Ճաշի գանգը հնչեց: Աշխատանքը պլանտացիայում դադարեց: Յերեխանները լվացվեցին ու մաքուր, թարմացած մտան սեղանատուն: Համեղ, անուշահամ տաք կերակուր դրին սեղանին:

Յերեխանները մեծ ախորժակով ճաշեցին:

— Սպրեք, փոքրիկներս, ասաց թեյի գործարանի զիրենկատորը, դուք այսօր տեսաք մեր աշխատանքը, ծանոթացաք թեյի մշակույթին: Տեսաք ինչպիսի յետանդով ու ստախանսվյան տեմպերով են աշխատում մեր բանվորները:

Իսկ այժմ գնանք թեյի գործարանը:

Ճաշից հետո յերեխանները դնացին գործարանը տեսնելու:

Դիրեկտորը յերեխաններին տարավ թեյի թարմ տերեւները թառամեցնող բաժանմունքը: Յերեխանները տեսան, թե ինչպէս ճղմիչ մեքենաները սեղմում,

ճգնում եյին տերեւները: Հետո գնացին վառարաններին, թեյի տերեւները չորացնող բաժանմունքը: Անցան թեյի տեսակավորող, բարձր հասկուլթյունը վորտչող բաժանմունքը: Մասնագետը՝ այդ քնքուշ, անուշահոտ բույսի ամենալիտքը տարրերուլթյունը հասկանում էր զտում և կարգավորում: Առանձին բաժանմունքում արկղներին մեջ դարձած եյին պատրաստի թեյի տեսակները: Արկղների վրա դրում եյին 1-2 տեսակի թեյ, նշանակում եյին քաշը և հազարավոր կիլոգրամ բարձրորակ թեյը պատրաստ էր խորհրդային յերկրի հանրապետուլթյուններին ուղարկելու համար, վրը խորհրդային ամեն մի բանվոր ու աշխատավոր էր սեղանին ունենար մեր յերկրի այդ թանկարժէք բարիքը—անուշահոտ թեյը:

Յերեխաների տրամադրուլթյունը շատ բարձր էր:

Արևն իջնում էր ծովի խորքը: Շրջակայքը, բլուրները, ծովը բոցավառվել եյին մայր մտնող արեւի շողերով:

Նրանք գնացին կայարան: Յերեխաները չափազանց գոհ և ուրախ եյին:

Գնացքը մոտեցավ, կանգնեց. վաչիկը մի կապոց տվեց ուսուցչուհուն:

—Մեր գործարանի թեյն և. ասաց.—հայրիկս նվիրում է մեր դպրոցին:

—Լավ: Թեյ կպատրաստենք յեւ մեծ դասամիջոցներին կլամենք Չաքլայի անուշաբույր թեյը,—ժպտալով ասաց ուսուցչուհին:

Բոլոր յերեխաները շնորհակալուլթյուն հայտնեցին ու հրաժեշտ տվին գիրեկատրին և բանվորներին:

Գնացքը շարժվեց դեպի քաղաք, էր հետ տանելով փոքրիկ եքսկուրսանտներին:

ԲԱՄԲՈՒԿ

Աչիկի հայրիկը գնալու յեր մոտակա գործարանը, փորտեղ բամբուկից կահկարասիներ եյին պատրաստ-

տում: Նա այդ դործարանում բամբուկի կահկարասի
յեր պատվիրել իրենց համար:

Յեկիսկ ասլրանքատար ավտոն. այդ ժամանակ
Աչիկն իր ընկերների հետ դպրոցից տուն եր վերա-
դառնում:

— Մենք ել ենք դալիս բամբուկի դործարանը,
ինդրեցին յերեխաները:

Հայրիկը, Աչիկը, Հրանտը, Վաղդենը նստեցին
ավտո և դործարան գնացին:

Բամբուկի մշակույթները շատ մեծ տարածություն
եյին բռնում: Իրարից հավասար հեռավորության վրա
ուղիղ շարքերով կանգնած եյին բարձր, վողդրիկ, բաց
վտակեզույն բամբուկները: Գազաթներին դուրս յե-
կած մետաքսանման դեղին փունջերը քամուց մեղմ
սոսափում եյին:

Գյուղատնտեսը բամբուկի մշակույթների մեջ աչ-
խատողներին կարգադրություններ եր անում: Նա բա-
րեվեց հայրիկին ու յերեխաներին:

— Հավանո՞ւմ եք մեր բամբուկները, — հարցրեց
նա:

— Շատ ենք հավանում, — ասաց Աչիկը, մոտ վա-
զելով, — ձեզանից պիտի խնդրեմ բամբուկի յերեք յեր-
կար, բարակ ցողուն, վոր կարթերն ամրացնենք ծայ-
րերին ու դնանք ձուկ բռնելու:

Հրանտն ու Վաղդենն ել առաջ վազեցին:

— Մենք ել ենք ուզում բամբուկի ցողուն, մենք ել
ենք ուզում, — աղաչակեցին նրանք:


— Լավ, փոքրիկներս, — ասաց գյուղատնտեսը, —
դնանք դեպի նոր բուսած բամբուկները, սրանք հասա-
կավոր բամբուկներ են, վոր տարիների ընթացքում
հաստացել և շատ բարձրացել են:

Նրանք անցան նորարույս բարակ բամբուկների
շարքերի միջով:

— Բամբուկը պատկանում է հացաբույսերի ընտա-
նիքին: Այս բամբուկների հայրենիքը Չինաստանն է
Ճապոնիան են: Սրանք կոչվում են «մադակե» տիսակ

և աչքի յեն ընկնում իրենց փայտի ընտիր հատկու-
թյամբ, սրանք աճում, մեծանում են շատ արագ, 5
շաբթվա մեջ բարձրանում են մինչև 18 մետր:

Գյուղատնտեսը սուր դանակով կտրեց յերեք բամ-
բուկ և տվեց տղաներին:



Նկ. 6. Բամբուկ:

— Մեր պարտիզում բամբուկ պիտի աճեցնեմ,—
ասաց Աշիկը:

— Պետք է խմանաս,— ասաց դյուղատնտեսը,—
վոր բամբուկն աճում է փխրուն, թարմ, խոնավ հո-
դում, տաք, բարեխառն կլիմայում 12-15 աստիճան
ցրտին բամբուկ չի դիմանում:

— Յես ուզում եմ մեր պարտիզում բամբուկներ
ուեննալ,— կրկնեց Աշիկը:

Գործարանը գտնվում էր բամբուկի դաշտերին
չատ մոտ, հայրիկը կանգնած էր դործարանի դռանը:

Այնտեղից դուրս ելին բերում բամբուկի պատ-
րաստի կահ-կարասիները, սիրուն մահճակալներ, սե-
ղաններ, աթոռներ, գրքակալ, շիրմա:

Այս բոլորը դարձնեցին ավտո, յերեսաներն էլ նըս-
տեցին ավտո ձեռներին մի-մի ցողուն բռնած: Հայրիկը
նստեց շոֆերի մոտ, դյուղատնտեսին շնորհակալու-
թյուն հայտնեցին և ավտոն սլացալ քաղաք:

Մայրիկն ուրախ-ուրախ դարդարեց սենյակները
նոր ստացված բամբուկի վստիկեղ կահ-կարասիներով:
Աշիկի բամբուկե մահճակալի վրա փափուկ անկողին
փռեց, վրան էլ զցեց ճերմակ ձյունափայլ սավանն ու
մաքուր բարձիրը:

Բամբուկե սեղանի վրա դարսեցին Աշիկի գրքերը,
ապա աթոռները շարեցին սեղանի շուրջը:

Աշիկը և նրա ընկերները բամբուկի ցողուններին
կարթեր կապեցին և վաղեցին լճի ավեր ձուկ վորսա-
լու:

Գիչ անց նրանք մի քանի փոքրիկ ձկնիկներով ու-
րախ տուն վերադարձան: Աշիկը նստեց նոր բամբուկի
սեղանի մոտ դասերը պատրաստելու, աթոռն էլ նստե-
լու համար շատ հարմար էր ու գեղեցիկ:

Ընթրիքի ժամանակ մայրիկն ասաց, վոր բամ-
բուկի կահ-կարասիները շատ հարմար, թեթև ու գե-
ղեցիկ են. փոշին հեշտ է սրբվում, գինն էլ թանգ չէ:

Ընթրելուց հետո Աշիկը պառկեց իր բամբուկե նոր
մահճակալի վրա, այնպես հաճելի յեր: Աշիկը յերա-

դում տեսալ, վոր իրանց պարտիզում շատ բամբուկներ եյին բուսել, բարձր, վողորկ ու գեղեցիկ, իսկ ինքն ուրախ վազվզում եր վոսկեշող բամբուկներէ շաքերի միջով:

Տ Ո Ւ Ն Գ Ա

Փոքրիկ Վաչիկն ու իր ընկեր Հրանտը կոլանտեսականների հետ տունգայի հասած սերմերն եյին հավաքում, լցնում կողովների մեջ և ուղարկում այն գործարանը, վորտեղ տունգայի սերմերից թանկագիններկեր ու բարձր վորակի լաք են պատրաստում:

Տունգան թանկարժեք բույս ե: Նրա հայրենիքը Զինաստանն ե. տունգան աճում ե մերձարեվադարձային կլիմայում, կարմրակալային խոնավ հողում:

Տունգայի բազմաթիվ ծաղիկները բացվում են, թերթիկները թափվում և նրանց տեղը յերկվում են հազարավոր սերմեր, վոր կաղնի մեծություն ունեն: Ընթ տարեկան տունգան տալիս ե 150-160 կիլոգրամ հասած սերմեր: Այդ սերմերը շատ յուղալի յեն:

Տունգայի յուղից պատրաստում են շատ բարձր վորակի ներկեր, լաքեր:

Այդ ներկերն ու լաքերը մեծ քանակությամբ գործ են ածում արդյունաբերական հիմնարկներում, մեքենաների մետաղյա մասերը ներկելու համար և ռետինի տրեստներում մեքենաները դարձնող փոկերը ներկելու համար:

Ամերիկայում տունգան 900 զանազան տեսակ գործածության ե ծառայում:


Հրանտը հավաքեց տունգայի սերմերը, լցրեց գլբսյանները:

— Տանեմ տունգայի սերմերը Սեվաստոպոլ, յեղբորս ցույց տամ, — ասաց նա:

— Յե՞րբ շոգենալ կնստեք, Հրանտ, — հարցրեց Վաչիկը:

— Այսօր յերեկոյան ժամը 8-ին:

— Յերանի քեղ, Հրանտ, շողենավ պիտի նստես:
 — Վաչիկ, արի նավահանգիստ, մեզ ճանապարհիք,
 ասաց Հրանտը:



Նկ. 7. Վաչիկը, Հրանտը հավաքում են գամբյուղով տուն-
 գայի սերմեր:



Հրանտը և իր հայրիկը շողենավի տախտակամա-
 ծի վրա ելին:

Վաչիկը յեկեկ էր նրանց ճանապարհելու:

Վաչիկն էլ բաճրացավ տախտակամածը:

Ամառային յերեկո յեր. ծովը խաղաղ էր. կա-
 պուտակ, լայնաշորած. միայն արեվմուտքում ջրերը
 վարդազույն ելին. արեվի հրավառ գունդը հանդարտ
 իջնում էր ծովի մեջ: Տղաներն իջան շողենավի մեքե-
 նաների բաժանմունքը:



A II
 15693

Մեքենավարը և նրա ողնակիանը շարժման մեջ էյին. շողենավը շուտով պիտի մեկնէր:

— Տես, Վաչիկ, շողենավի մետաղյա մասերը ներկված են տուճեղալի բարձրորակ ներկով:

— Շողենավի անիւնները և ջրի մեջ գտնվող նրա մետաղյա մասերը նույնպես ներկված են տուճեղալի ներկով ու լաքով:

— Բայց դուք այդ բոլորը չէք կարող տեսնել. այդ մասերը ծովի մեջ են, այդ ներկը պաշտպանում է նրանց ժանդոտվելուց և ջրային լարձուն կենդանիներէ, — ասաց մեքենավարը:

Հնչեց շողենավի սուլոցը:

Վաչիկը հրաժեշտ ասեց ընկերոջն ու շողենավից ցած իջավ: Շողենավը ծանր և հանդարտ առաջ շարժվեց:

Ճանապարհորդները տախտակամած դուրս յեկան և թաշկինակները ճոճում էյին ողում:

Վաչիկը նավահանդստում կանգնած նայում էր, թե ինչպես շողենավը հեռանում էր ավերից. նախի սուր կուրծքը և դեկը ճեղքում էյին ծովի կանաչաւուն ջրերը:

Ջրերը վրիւրում, կոհակ-կոհակ տարածվում էյին դեպի հեռունները: Միայն մի ճերմակ դիժ էր մնում շողենավի հեռակից, իսկ ծիսնելույզի ծուխը քամին քուլա-քուլա տանում էր հեռո՛ւ-հեռո՛ւ:

Շողենավը վերջալույսի վարդադուլն ջրերի մեջ լողալով հեռացավ, փոքրացավ. Վաչիկը տեսնում էր միայն մի փոքրիկ հեռացող կես: Շուտով այդ ել ծածկվեց Վաչիկի աչքերից:

Հրանտը և հայրիկը հասան Սեվաստոպոլ:

Հրանտի կապիտան յեղբայրը նրանց դիմաւորեց և իր մոտ տարավ:

Հրանտն այնպես ուրախ էր: Չգիտեր ուր գնար և ինչ տեսներ. դնալու տեղեր և տեսնելու բաներ չառ կային:

Յեղորոք հետ գնացին: Տեսաւ մեր հզոր, պանծալի
կարմիր նավատորմիզը — ռազմանավեր, սարքավոր-
ված հրանոթներով և թնդանոթներով:

Գնացին նավակայանը — այնտեղ շատ նոր նավեր
եյին պատրաստում:

Նավերի անիւնները և ծովի մեջ իջնող մետաղյա
մասերը ներկում էին տունդայի ներկով և լաքով
ծածկում: Ներկած մասերը մի քանի ժամից հետո ա-
պակու պես չորանում էին ու փայլում:

— Այս հրաշալի ներկը մենք ստանում ենք տուն-
դայի թանկարժեք ծառի սերմերից, — ասաց վարպետ-
ներից մեկը:

— Մենք Բաթումիում տունդայի մշակույթների
մեջ ենք աշխատում, — հարարտությամբ ասաց Հրան-
տը և գրպանից հանեց տունդայի սերմերը, ցույց
տվեց յեղբորը և վարպետներին:

Հրանտի համար ամենալավ, ամենաանմոռանալի
որն այն որն եր, յերբ յեղբայրը նրան տարաւ անբո-
գբում, իր ընկեր ողաչուի մոտ:

Այնտեղ Հրանտին ցույց տվին բարձր տեխնիկա-
կան կառուցվածքով սավառնակը:

Սավառնակի մետաղյա մասերը ապակու նման
փայլում, շողչողում էին:

Հրանտը հիացած շոշափում, դիտում եր սավառ-
նակի ներկված մասերը:

— Տունդայի թանկարժեք ներկով և ներկված և
լաքով ծածկված, այդպիսով սավառնակի մետաղյա
մասերը խոնավ ողում, քամու, արեվի տակ չեն ժան-
դոտովում, այդպես փայլուն, շողչողուն կմնան: Տուն-
դայի յուզը ողնում և, վեր սավառնակը թեթև բարձ-
բանա, բացատրեց ողաչուն:

Հրանտն այստեղ ել հանեց իր գրպանից տունդայի
սերմերը և ցույց տվեց ողաչույին:

— Տեսե՛ք, ահա տունդայի սերմերը, — ասաց
Հրանտը և այդ սերմերը նվիրեց ողաչու Դմիտրիին:
Ողաչուն Հրանտին և յեղբորը հրավիրեց սավառ-
նակ նստել:

Նրանք սավառնակով թռան քաղաքի վրա և
բարձրից տեսան այդ գեղեցիկ քաղաքը: Հրանտը տուն
վերադարձավ և շատ բարձր տրամադրությամբ նա-
մակ դրեց Վաչիկին:

Սիրելի Վաչիկ,

Սեվաստոպոլը դիտության, բարձր տեխնիկայի
քաղաք է:

Յես յեղա ուղմանավի վրա, հետո սուղանավերը
դիտեցի, այնուհետև յեղբորս հետ ողանավով սա-
վառնեցինք, բարձրացանք մինչև ամպերը:

Ամեն տեղ մեր տունդայի թանկարժեք յուղն են
գործածում մեքենաների, նավերի ու սավառնակների
մասերը ներկելու համար:

Աճեցնենք ու խնամենք այդ ոգտակար ծառը—
տունդան: Իսկ յերբ յես մեծանամ, կարմիր բանակա-
յին պիտի դառնամ ու պաշտպանեմ մեր գեղեցիկ, ու-
բայս ու յերջանիկ հայրենիքը՝ — ԽՍՀՄ-ը:

Պիոներական բարեկներով՝

ք՞ ընկեր ՀՐԱՆՏ

ԿԵՂԵՎԱԹԵԼ

Տիգուշի հայրիկը դյուղատնտես էր: Նրանք ապ-
րում էյին խորհրդային տնտեսությունում: Նրանց տան
առջևիլի հողամասը հայրիկը հերկել տվեց և կեղեվա-
թելի սերմեր ցանեց:

— Կեղեվաթել բուսնի, Տիգուշիս մաքուր լողաց-
նեմ, ասաց մայրիկը:

— Բույսով պիտի լողանամ, մտածում էր Տիգուշը:
Հայրիկի ցանած սերմերը ծլեցին, բարձրացան:

Հայրիկը բարակ բամբուկներով ցանած մարգի
չորս կողմը ցանկապատ շինեց: Կեղեվաթելի քնքուշ

ցողունը արագ փաթաթվեց այդ բամբուկներին, և մի շարաթ անց ամբողջ ցանկապատը ծածկվեց կեղեվաթելի թարմ, կանաչ, մեծ-մեծ տերեւներով: Իսկ ելի մի քանի որից հետո տերեւների միջից Ժպտում ելին անթիվ, բաց դեղին ծաղիկներ, վարունց վրա մեղուները տղալուով մեղր ելին հավաքում:

Ելի անցավ մի քանի որ. դեղին ծաղիկները թափվեցին և վարունգաձեւ, թարմ կանաչ անհամար կեղեվաթելերը կախվեցին ամբողջ մարդի տարածությամբ:

Տիգուչն ու Շալիկոն մի քանի կանաչ կեղեվաթել պոկեցին, մի անկյուն քաշվեցին ու ախորժակով սկսեցին կանաչ կեղեվաթելը կրծոտել:

— Շալիկո, ինչ անհամ, դառն ու կոշտ վարունգ ե այս, — ասաց Տիգուչը և զզվանքով թափեց բերանից ծամամծ կեղեվաթելը: Շալիկոն ել դադարեց կրծել:

Մայրիկը մոտեցավ և ծիծաղելով ասաց.

— Ի՞նչ եք անում, բլիկիկներ, կեղեվաթելն ուտելու բան չէ: Կեղեվաթելով պետք է ձեր կեղտերը լվանաք:

Տիգուչն ու նրա ընկերուհի Շալիկոն զարմացել էլին: Իսկ վարունգներն անչափ մեծացել էլին, կարծես կանաչ ու յերկաթ սեխեր լինեյին:

Հայրիկը բոլոր կեղեվաթելերը քաղեց և դրեց արեվին չորանալու:

Արդեն աշուն էր: Խորհանտեսության մանկապարտեղը պատրաստ էր:

Մայրիկն ասաց Տիգուչին. — Ա՛յ, պատրաստվիր, վոր մանկապարտեղ զնաս: Ծնկներիդ չբտեբով կեղտ է նստած:

— Ծիչա ե, մայրիկ, յես և Շալիկոն զնում ենք բանջարանոց, դադար ու վարունգ փնտռում:

— Կեղեվաթելով պետք է լվանաս և ծնկներդ կը մաքրվի, — պատասխանեց մայրիկը: Ապա նա մի մեծ կաթսա կրակի վրա դրեց, ջուրը յեռացրեց:

— Մայրիկ, ինձ պիտի լողացնե՞ս, — հարցրեց Տիգուչը:

— Վոչ, դեռ կեղեվաթելը պիտի խաչենք:

Մայրիկը Տիգուշի և Շալիկոյի ողնությամբ կեղեվաթելի միջի բուրբ կորիզները հանեց, կեղեվաթելը զրեց արևիլի տակ չորանալու:

— Ինչի՞ համար են այդ կորիզները, մայրիկ, հարցրեց Տիգուշը:

— Յեկող ամառ նորից կցանենք:

— Ինչքա՞ն շատ կեղեվաթել է բուսնելու, մայրիկ:

— Ալեկի լավ, միայն մեր մերձարեվադարձային կլիմայում և բուսնում կեղեվաթել: Բայց փորձեր են անում ուրիշ տաք կլիմաներում ել անեցնել:

Կեղեվաթելերը յեռացրած ջրի մեջ լցրին և յերկար յեռացրին:

Յերբ յեռացրած կեղեվաթելերը հանեցին, այնպես մաքուր ու սպիտակ ելին: Անթիվ թելերը կես մետր յերկարությամբ և 15 սանտիմետր լայնությամբ հյուսված ելին իրար:

— Մայրիկ, կեղեվաթելով վոր ինձ լողացնես, ծնկներս կմաքրվե՞ն:


— Այո, բալիկս: Վաղն առավոտ քեզ կլողացնեմ: Այս մի կեղեվաթելն ել տար, Շալիկո, դու լվացվիր— տեսնենք կեղեվաթելը քեզ մաքուր կլվանա՞, — ասաց մայրիկը և մի կեղեվաթել նվիրեց Շալիկոյին:

Մյուս առավոտ մայրիկը ջուր տաքացրեց, Տիգուշին նստեցրեց տաշտի մեջ, կեղեվաթելին սապոն քսեց և սկսեց լողացնել: Սապոնն այնպես լավ եր վրվրում կեղեվաթելի վրա. Տիգուշը սապոնում կորած սկսեց բարձր ծիծաղել ու յերգել:

— Ապա, բալիկս, այսպես է այս մաքրասեր կեղեվաթելը կեղտոտ մարմինը մաքրում ու ձյունի պես սպիտակ դարձնում:

Տիգուշը հասկացավ, թե ինչքան ոգտակար է կեղեվաթելը և խոստացավ մայրիկին մյուս գարնան իրենց պարտիզում կեղեվաթելի շատ սերմեր ցանել ու խնամել:

Տիզուչը հետեւյալ առաւելոտ մաքուր-մաքուր դնաց
մանկապարտեզ:



Նկ. 8. Մայրը իբ տղային կեղևաքելով (մաչալկա) լվանում
է:

ԵՎԿԱԼԻՊՏԸ

Վաղդէներ մանկապարտեզում կարգապահ են ու
գերազանցիկ: Իրենց կոլտնտեսութեան յերեսխաների
շրջանում եւ համարվում են սրամիտ, խելօք տղա, բայց
մի անգամ նա այնպես սխալվեց, վոր բոլորը ծիծա-
ղեցին նրա վրա: Ահա թե ինչպես պատահեց այդ:

Գարնան սկիզբն էր, որը տաք, դուրեկան, Վաղ-
դէներ մանկապարտեզից տուն յեկալ ու վազեց կոլտնտե-
սութեան մշակութիւնները:

Վաղդէնի հայրիկը, մեծ յեղբայրը կտրել է յին
իրենց կոլտնտեսութեան մեծ, հաստաբուն ծառն ու

կտոր-կտոր ելին անուամ: Աշխատողները մի մասը մեծ շարձարանքով ծառի արմատն եր գետնից հանում, վոր խորը գցած արմատներով յերկաթի ամբուլթյուն ունեն: Մյուսները կտրած ծառի մասերը դարտում ելին ապրանքատար ավտոյին: Աշխատողները մեջ մի նոր, անծանոթ մարդ կար մոխրագույն հագուստով, դեմքը արեվառ, գլխարկը հետ դրած անցնում եր աշխատողների միջից, կարգադրություններ եր անում, ամենքը նրան ելին լսում:

— Եվկալիպտ ծառի փայտը բոլորը նավաշինարանն պիտի տանեն,— հարցրեց մի կոլտնտեսական:

— Այո, բոլորը,— պատասխանեց անծանոթը:

— Եվկալիպտ ծառից ի՞նչքան շատ փայտ դուրս յեկավ:

— Եվկալիպտ ծառի փայտը շատ բարձր վորակ ունի:

— Եվկալիպտ ծառը, մենք մեր կոլտնտեսություններում շատ պետք ե անցնենք, այսպես խոսում ելին կոլտնտեսականները և աշխատում, իսկ Վազգենը նայում եր գլորված հսկա ծառին, այդ նոր, անծանոթ քեռուն և լսում եր շարունակ «եվկալիպտ», «եվկալիպտ» բառը:

Այս նոր, անծանոթ քեռու անունը Եվկալիպտ ե,— մտածեց Վազգենը և նայեց անծանոթին. անծանոթ քեռին շոյեց Վազգենի խարտյաչ մազերը: Վազգենը ցուցց տարով ձեռքին բռնած ծառի կտորն ասաց.

— Բեռի Եվկալիպտ, այս ծառի փայտից նավակ կշինեմ, առվի մեջ կգցեմ, կխաղամ, լավ կլինի, չե՞...

— Շատ լավ կանես, փոքրիկ կառուցող,— ժպտալով ասաց նորեկը:

Վազգենն ուրախ-ուրախ վազեց ընկերների մոտ:

— Նոր քեռի յե յեկել մեր կոլտնտեսությունը, անունը Եվկալիպտ ե: Մեր մեծ ծառը կտրել են, այնքան փայտ կա այնտեղ. այս փայտից յես նավակ եմ շինելու,— ուրախ-ուրախ պատմեց Վազգենը:

Վազգենը մանկապարտեզից տուն յեկավ, իր շինած նավակը վերցրեց, ընկերներէ հետ գնացին առվի մոտ և նավակն առվի մեջ գցեցին: Հայրիկը, մեծ յեղբայրը, կոլտնտեսականները ծառի դալար առնկեր եյին տնկում: Այնտեղ գետինը բաց եր, ճահճոտ, յերեխաները խրվում եյին ճահճի տիղմի մեջ և դժվարութեամբ եյին քայլում:

— Եվկալիպտ ծառը կծծի այս խռնալուծիտունը, կչորացնի ճահճները և մոծակներն ել կլիջնչանան, — ասում եր մի կոլտնտեսական:

— Եվկալիպտ ծառը կպաշտպանի մեր թեյի, ցիտրուսի, տունդայի մշակույթները քամիներից, վոթորիկներից:

— Եվկալիպտ ծառը դանձ ե, հարստութիւնն ե մեր յերկրի համար:

— Եվկալիպտ ծառը զարմանալի արագ ե աճում. բարձրանում: Մի տարի առաջ հարեւան կոլտնտեսութիւնում տնկեցինք, հիմա մեծ ծառեր են դարձել 3-4 մետր բարձրութեան: Սոսում եյին կոլտնտեսականները, իսկ նորեկը ցուցմունքներ եր տալիս:

Յերեխաները ճահճների մեջ առվի ավին իրադում եյին, նավակը հոսանքի հետ գնում եր, իսկ Վազգենը թեւը քաշում եր և նավակը նորից հետ բերում: Այնպես ուրախ եր խաղն ընթանում:


Այդ ժամանակ նորեկ քեռին մոտեցաւ յերեխաներին:

— Եվկալիպտ քեռի, տե՛ս, նավակս ինչպես ե լողում, — խոսեց Վազգենը:

Հայրիկն ու յեղբայրը նույն տեղում աշխատում եյին:

— Այս փոքրիկն ինձ Եվկալիպտ ե կանչում, — ծիծաղելով ասաց նորեկը, — բոլորն ել ծիծաղեցին: Վազգենն ավելի ուրախացաւ:

— Յերեվի նավակս գեղեցիկ է. լալ է լողում, գրա
համար են ծիծաղում, — մտածեց Վազգենը:



Նկ. 9. Եվկալիպտ ծառը:

Վազգենն ու նրա ընկերները նստել էյին պարտիզում
արևվոտ ծառերի տակ ու սեղանի վրա սպիտակ, մա-
քուր թղթերը փռած զարնան ծաղիկներ էյին նկարում:

Վազգենի յեղբայրը վերջրեց մաքուր սպիտակ
թուղթը և ասաց.

— Եվկալիպտ ծառից ստացվում է նաև այսպիսի սպիտակ թուղթ:

Վազզենը ծիծաղեց:

— Յեղբայրս ինչեր ե խոսում: Կարելի՞ չէ Եվկալիպտ քեռուց թուղթ ստանալ... բան չեմ հասկանում:

Փոքրիկները նկարելուց ճանճրացած դնային խաղալու: Այնտեղ հայրիկը, յեղբայրը, կոլանտեսականները մեծ արկղների մեջ հող եյին լցնում և ինչ վոր սերմեր եյին ցանում:

— Մեր ցանած սերմերից ինչքան շատ եվկալիպտներ պիտի բուսնեն, — ասաց յեղբայրը:

— Սերմերից եվկալիպտներ պիտի բուսնեն: Հա, հա, հա:

Այստեղ Վազզենը փոթկաց.

Եվկալիպտն արսր այն նորեկ քեռին ե, իսկ յեղբայրս ի՞նչ ե ասում:

— Վա՞ր քեռին, — ծիծաղելով հարցրեց նորեկը:

— Դու յես քեռի. քո անուը Եվկալիպտ ե, — ասաց Վազզենը համոզված:

— Այսր տեսնում եմ, այս յերեխան անունս Եվկալիպտ ե դրել, — ծիծաղեց նորեկը: Բոլորը ծիծաղեցին, իսկ յերեխանները աղմկելով սկսեցին վազվել ու մեկը մյուսին հայտնել ծիծաղելի դեպքի մասին:

— Իմ անունս Գեվորդ ե, փոքրիկներս, իսկ «Եվկալիպտ» այն արժեքավոր ծառն ե, վոր մեր խորհրդային յերկրի համար շատ պետքական ե: Յես գյուղատնտես եմ, և կոլանտեսականների հետ աճեցնում ենք այդ ծառերը:

— Եվկալիպտը ծառ ե, հասկացա՞ր, իմ խելոք փոքրիկս, — ասաց հայրիկը:

Վազզենի ծիծաղը դադարեց. նա շատ վշտացավ: Ամենքն իրեն խելացի, գերադանցիկ, սրամիտ եյին ասում, և հանկարծ նա սխալվեց:

Այդ որվանից անցան տարիներ: Կոլանտեսուլթյունում տնկած եվկալիպտի փոքրիկ տունիկերը բոյ

քաշեցին, մեծացան: Ինքը Վաղգենն եւ մեծացել,
բարձր դասարանի գերագանցիկ աշակերտ եր:

Կոլտնտեսութեան բույսերի մեջ ամենից շատ նա
եվկալիպտան եր սիրում: Կոլտնտեսութեան մտա կառու-
ցել էյին մեծ դործարաններ, վորտեղ սղոցներն աղմու-
կով տախտակներ էյին քաշում եվկալիպտից: Մի ուրիշ
ցեխում եվկալիպտից մաքուր, սպիտակ թուղթ էյին
սրատրաստում, տերեւիներից յեթերային յուղեր ստա-
նում:

Բայց Վաղգենը յերբեք չի մտտնում իրեն հետ
սրատահած այն դեպքը, թե ինչպէս ինքը սխալվեց եւ
բաւորը նրա վրա ծիծաղեցին: Այժմ յերբ հիշում ե,
ինքն եւ ե ժպտում:

ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԵՐԻՆ

Մանկական լազերը գտնվում եր ծովափից վոչ
շատ հեռու:

— Յերեխանե՛ր, — ասաց ղեկավարը, — այս ամառ
այտեղ պետք ե անցկացնենք: Տեսնում եք, ծովք
մեղնից մի քանի քայլի վրա յե գտնվում: Մենք պետք
ե ամեն որ ծովափում ողի, արեւի վաննաներ ընդու-
նենք ե լողանանք:

— Պետք ե լողանա՞նք ամեն ուր, — հրճվանքով
կանչեցին յերեխաները:

— Այո, հիմա վերցրեք ձեր մաքուր յերեսորբիչ-
ները, յեկեք շարքի կանդնեցեք, — ասաց ղեկավարը:
Յերեխաները դնացին, բերին յերեսորբիչները ե
շարքի կանդնեցին:


— Հիմա գնանք ծովափ, — ասաց ղեկավարը:
Յերեխաներն ուրախ-ուրախ շարքերով ծովափ
գնացին:

— Նստեցեք ավազների վրա, հանեցեք ձեր շորե-
րը, — ասաց ղեկավարը:

Գլուխները սպիտակ սրբիչներով ծածկեցեք, վոր
արեւահար չլինեք:

Յերեխաները դռնները սրբիչներով ծածկեցին:
 — Հիմա պառկեցեք փափուկ ավազների վրա աջ
 կողքին:

Այսպէս տաք եր ու դուրեկան: Ղեկավարը ժամա-
 ցույցը ձեռքին հաշիւում եր բոպենները:



Նկ. 10. Յերեխաները ծովի ափին տաք ավազի վրա արևի
 վաննա յեն բնդումում ու լողանում:

— Այստեղ յերեք բոպեն բալական ե, ամեն ոք բո-
 պենները կավելացնենք, — հիմա վեր կացեք, յերեխա-
 ներ, և ծովը մտեք:

Յերեխաների ուրախութեանը չափ չկար: Ծիծա-
 ղելով, ազմկելով ծովը մտան: Ափը ծանծաղ եր և
 հատակը մանր ավազով ծածկված: Ալիքների փոքրիկ
 կոհակները զարնվում եյին ծովափին ու մանր կա-
 թիլներով ծածկում փոքրիկների դեմքերը:

Այնպէս լավ եր ծովը, այնպէս հաճելի, յերեխա-
 ները չեյին ուղում ծովից դուրս գալ, բայց կարգա-
 ղրվեց հագնուիլ:

Յերեխաները կայտառ շարքերով վերադարձան և մտան սեղանատուն, կարգով նստեցին սեղանների շուրջը: Իերին անուշահոտ ճաշը:

Այդ նույն րոպեյին բոլորի ուշադրութ յունը գրավեց մի անծանոթ աղջիկ, վուր յեկել եր սեղանատուն և նայում եր ճաշող յերեխաներին: Նա շարունակ ժպտում եր:

— Փոքրիկս, ի՞նչ ես ուզում, — հարցրեց նրան դեկավարը:

Աղջիկը վոչինչ չհասկացավ, միայն ժպտում եր ու նայում նրանց: Այդ անծանոթ աղջկան նույնպես հրավիրեցին իրենց հետ ճաշելու: Նորեկը չհրաժարվեց և նրանց հետ նստեց ճաշելու:

Ճաշը վերջացավ, յերեխաները վեր կացան, վերցրին ատամի խողանակը, փոշին և դնացին ջրի մոտ ատամները լվանալու:

Աղջիկը հետևում եր նրանց:

Լամարան հարցրեց վրացիներն.

— Ի՞նչ ես ուզում:

Անծանոթ աղջիկը վոչինչ չհասկացավ:

— Ո՞վ ես դու, փոքրիկ աղջիկ, — մտենալով նրան հարցրեց փոքրիկ Տանյան:

Դարձյալ անծանոթը բան չհասկացավ:

— Գիտեմ, դու ինձ կհասկանաս, մտենալով խոսեց դանդրահեր Հայկուշը... անծանոթը քաղցր ժրպտում եր. բան չեք պատասխանում:

Առաջ յեկավ աջարացի Հարիբեն ու սոսց.

— Դու ծիծաղում ես, դու մեզ սիրեցի՞ր:

Անծանոթի դեմքը շողաց ուրախութ յունից, նրա լեզուն բացվեց ու փափուկ տաճկական բառերով ասաց. —

— Ինչքա՞ն լավ ե այտեղ ձեզ մոտ, ինչ ուրախ եք ապրում դուք, — այո, յես ձեզ սիրեցի, բայց դուք ի՞նչ լեզուներով եք խոսում:

— Վրացիներն, հայերեն, ռուսերեն, հունարեն, — պատասխանեցին յերեխաները:

— Այդ բոլոր ազգերդ միասինն եք ապրում այս-
տեղ, — ասաց անծանոթ աղջիկը զարմացած:

— Այո, — պատասխանեց Հարիբեն:

— Յես ձեր ասածներից ամեն բան հասկացա, իմ
մայրիկն ուսուցչուհի յե, կինդբեմ նրան, վոր ինձ
ձեզ մոտ տեղավորի: Յես շատ սիրեցի ձեր կյանքը:

— Ժամանակն ե հանգստանալ, յերեխաներ, դնա-
ցեք ննջարան, — ասաց ղեկավարը:

Յերեխաները դնացին պառկեցին իրենց մահճա-
կայիների վրա: Տիրեց խոր լուսթյուն:

Անծանոթ աղջիկը ժպտաց, ձեռքը պարզեց ուղի
մեջ, ցտեսություն ասաց ու հեռացավ:

Ինչքան լավ ե այստեղ, ինչքան ուրախ ե, —
չչնջում եր նա:

ԾՈՎԱՅԻՆ ԽԵՈՒՆՁՆԵՐ


Վանիկի հորեղբայրը ձկնակալանի մասնագետ եր:
Նա իր նավակով շատ անգամ կայանի բնագետների
հետ ծովն եր դուրս գալիս, ծովային կենդանիների և
բույսերի կյանքն ուսումնասիրելու նպատակով:

Ամռան պայծառ մի առավոտ, Վանիկն իր փոքրիկ
ընկեր Գուրգենի և հորեղբոր հետ ծովափ դնացին:
Հորեղբայրը նրանց վաղուց խոստացել եր նավակով
պատեցնել ծովի վրա: Այդ ուրը նա իր խոստումը կա-
տարեց: Նավակը թիավարում եր հորեղբայրը: Մեզմ
տալիքների վրայով նավակը սուբալով առաջ եր բնթա-
նում: Հորեղբայրը ցանցը ծովը ձգեց և մի քանի բո-
պեյից հետո ցանցը դեպի նավը քաշեց: Յանցի մեջ ե-
լին ընկել մանր ձկներ և մի քանի խեցիներ:

Վանիկն ու Գուրգենը բռնած վորսը ձգեցին ջրով
լիքը մի փոքրիկ դուլի մեջ: Խեցիներից մի քանիսը
սրտաձև կրային փեղկերով «կորդիում» կոչված տե-
սակեց ելին, մյուսները դլանաձև, յերկարավուն,
վոլորուն ծայրերով վերևը լայնացած:

— Լավ նայեցեք, յերեխաներ, — ասաց հորեղ-

բայրը: Այս գլանաձև խեցիի մեջ ապրում է կենդանի խխունջը: Այս խեցին խխունջի բնակարանն ու պաշտպանվելու միջոցն է: Խեցիի մեջ խխունջն ապահով նստած է, միայն դուրս դուրս է հանում այս փամփայկ յեբբ կերակուր և փնտրում: Ահա այդ ժամանակ, հանկարծ նրա վրա հարձակվում են ձկները կամ խեցզեափնները, ամուր բռնում են դրսից, դուրս են քաշում խեցիից և անուշ անում:



Նկ. 11. Ծովային խխունջներ:

— Տեսեք, տեսեք, հորեղբայր, խխունջը քայաբավ իր անակի փեղկերը. դուրս քաղցած է, — դուրս պանիկը:

— Ահա այս գլանաձև խեցիի միջից խխունջն իր ճանկերը դուրս է հանում, — ասաց Գուրդենը:

— Այժմ դրա մեջ վրչ թե խխունջը, այլ փոքրիկ ծովային խեցզեափնն է ապրում: Խեցզեափնը կերել է այդ խեցիի բնակիչ խխունջին, հետո ել մտել է նրա ապահով բնակարանն ու պաշտպանվում է իր թշնամիներից: Տեսեք, նա դուրս է հանել իր դրուխը, ճիւղանները և խեցին հեռը քաշ տալով, կերակուր է վորոնում: Այդ խեցիի միջից նա ել յերբեք դուրս չի գա:

Վանին ձեռքը մեկնեց, վոր բռնի խեղդեանին, բայց խեղդեալինը թաղնվեց խեցիի մեջ:

— Ի՞նչ խորամանկն է, — ծիծաղեցին յերեսանե-
բը:

Առլեհը մտեցաւ ծովի մեջ ցցված մի ժայռի ու կանդ առաջ: Յերեսաները տեսան ժայռի մերկ լան- ջերին իրար վրա դարսված ու կպած անհամար խեցի- ներ: Նրանք դորչ գույն ունեցին և ականջաձեւ էյին:

Ծովի ալիքները չբմբալով դալիս զարնվում էյին այդ ժայռին և ելի հետ փախչում:

— Սրանք «միդիա» կոչված խխունջներ են, — ա- սաց հորեղբայրը:

— Ի՞նչպես է, վոր ալիքն այդ միդիաներին ժայ- ուից չի պոկում:

— Նրանք կաշող հյութ ունեն, վորով կաշում են և ամուր մնում, — ասաց հորեղբայրը:

Յերեսաները մի աման լիքը միդիա հալաքեցին, և նավակն ալիքների վրա մեղմ որորվելով, վերա- գարձալ: Այի մոտ ընկած եր ծիածանի թափանցեկ գույներ ունեցող լպրծուն մեղուզան:

— Սա ի՞նչ բան է, կարծես գույնզույն մարմաբ լինի, — ասաց Գուրգենը և բռնեց մեղուզան, բայց ի- կույն ձեռքը սարսափով հետ քաշեց:

— Ձեռքս այրվեց, — բղավեց նա:

— Ձեռք չտաք մեղուզային, — բղավեց հորեղբայ- րը, նրա լորձնային մարմինը հյութ է արտադրում, վոր այրող է: Մեղուզայի մասին յես ձեզ կպատմեմ մի ուրիշ անգամ:

— Վանի՛կ, տես յես ինչքան խեցիներ գտա, — կանչեց Գուրգենը, ծովափից խեցիներ հալաքելով:

— Դրանք դատարկ խեցիներ են, վոր ծովի ալիք- ներն ալազի հետ դուրս են շարտել — բացատրեց հո- րեղբայրը:


— Այսոր վորքան նոր բան սովորեցինք, — ասա- ցին յերեսաներն ու իրենց հալաքածը վերցրած ու- ղախ-ուրախ ցրվեցին, շնորհակալություն հայանելով հորեղբորը:

Դպրոցում բնաշխտութեան դասը մեղուզան եր: Ուսուցչուհին պատմեց, և դրատախտակի վրա մեղուզա նկարեց:

Դասից հետո ուսուցչուհին աշակերաններին տարավ դեպի Սև ծովի ափերը, կենդանի մեղուզա ցույց տալու համար:

Այն հասնելով, ուրախ ազմուկով նրանք նախա նստեցին: Ծովը խաղաղ էր, պարզ, վճիտ: Զրեքը ծփում էյին և նավակը սահում էր առաջ:

— Ծովի խորքը նայեցեք, — ասաց ուսուցչուհին. ահա մեղուզան լողում է ընդարձակ, ազատ ծովի մեջ: Նայեցեք մեղուզայի զանգածև մարմնին, վոր թափանցիկ է ու լորձնային, ունի ծիածանի քնքուշ գույներ: Նա հանգարտ տարուբերվում է ալիքների ծփանքի հետ, շողշողում է իր գեղեցիկ գույնով: Ահա պարզ ջրի մեջ նա արձակել է իր յերկար թելանման ճիրանները, այսինքն վոտները, վորոնցով նա հափրչտակում է իր վորսը: Մեղուզան ազած է ու շատակեր:



Նկ. 12. Մեղուզաներ:

— Իսկ ծովի մեջ մեղուզայի համար վորսը պակաս է: Միամիտ ձկները և ուրիշ ջրային մանր կենդանիներ դիպչում են շողշողուն դրավիչ մեղուզային, այն

ժամանակ մեղուզան իր թելային ճիրաններից ու մարմնից բաց ե թողնում այրող, դաղող մի հյուսթ, շշմեցնում, շանթահարում ե իր դոհին և այլալիսով հափշտակում ե, ուտում: Նրա ստամոքսը տեղավորված ե դանդաձև մարմնի կենտրոնում:

Մեղուզան ունի և իր բարեկամ ձկները, վորոնց նա չի վնասում, այլ թույլ ե տալիս, վոր նրանք լողան, ճախրեն իր շուրջը, իր ճիրանների արանքում: Այդ ձկները մաքրում, կուլ են տալիս մեղուզայի ճիրանների վրայից թանձր շերտով նստած ծովային արիղմը, վորը դժվարացնում ե մեղուզայի հարձակումներն իր վորսի վրա: Այդ ձկները մեղուզայի ստնիտար ձկներն են և բարեկամները:

Յերեխաները հատուկ ցանցով բռնեցին գեղեցիկ լյրծուն մեղուզային և դցեցին ջրով լի տաշտի մեջ: Նավակը հետ դարձավ, բորբն ափը դուրս յեկան և քնացին ձկնակայան, վորտեղ մեծ ավազան եր շինված: Մի լայն խողովակով ծովից ջուր եր լցվում ավազանի մեջ, մի ուրիշ խողովակով ավազանի կեղտոտ ջուրը դուրս եր թափվում: Աշակերտները բռնած մեղուզան դցեցին այդ ավազանի մեջ: Ձկնակայանի յերիտասարդ բնագետները յեկան և իրենց հետ բերած յերիտասարդ բնագետները յեկան և իրենց հետ բերած ձկները թողին ավազանի մեջ: Մեղուզան նրանց վրա հեղուկ բաց թողեց և կլանեց, այնուհետև ուրիշ տեսակի ձկներ բաց թողին ավազանի մեջ: Նրանք ազատ սակի ձկներ բաց թողին ավազանի մեջ: Մեղուզան լողում, ճախրում եյին մեղուզայի շուրջը: Մեղուզան նրանց չեր վնասում, դրանք իր բարեկամ ձկներն եյին: Յերեխաներն այդ բորբը տեսան, ուտումնասիրեցին:

Բնագետության այդ որվա դասն անցավ շատ աշխույժ և կենդանի: Դեռ յերկար ժամանակ յերեխաները կանգնած եյին ավազանի մոտ, դիտում եյին մեղուզային և նրա բարեկամ ձկներին, վորոնք մեղուզայի ստնիտարներն եյին:

Յեվ ուսուցչուհին և աշակերտները շատ դժ մնացին այդ հետաքրքրական եքսկուրսիայից:

Հրանտն ու Վազգենը ճահճոտ առվակի մեջ վտարորբիկ վաղվզում եյին ու խաղում:

Առվակի մեջ շողշողալով լողում եյին դամբուղիա կոչվող շատ փոքրիկ, սիրուն ձկնիկներ, խոշոր փայլուն աչքերով: Հրանտն ու Վազգենն աշխատում եյին նրանց բռնել:

— Ինչո՞ւ յեք բռնում դամբուղիա ձկնիկներին, — ասաց հայրիկը, վոր այդ փամանակ բծչիկ և կոլտրնտեսակներին հետ մոտեցալ առվակին:

— Առվակի մեջ անհամար դամբուղիաներ կան, հայրիկ, ասաց Հրանտը:

— Յեվ շատ լա՛վ է, ասաց բծիչկը: Գամբուղիա ձկներին մենք բերել ենք Ամերիկայից ու բաց թողել մեր Կոլխիդայի ճահճոտ ջրերի մեջ, վորտեղ մոծակները միլիոնավոր ձկեր են ածում, իսկ դամբուղիա ձկնիկները կերակրվում են մոծակների ձկերով և այդպիսով պակասեցնում մոծակների թիվը:

— Գամբուղիա ձկնիկները կենդանածին են. մյուս ձկների նման ձկերի մեջուց չեն բազմանում, — շարունակեց բծիչկը:

Կոլանտեսականները սկսեցին մազութ թափել ճահճոտ առվակների մեջը և ավերին:

Ջրերի վրա անհամար մոծակներ թափանցիկ թեփերը տարածած, տարուբերվում, որորվում եյին ջինջ ողի մեջ: Երջակայքում շարքերով տարածվում եյին մանդարինի, կիտրոնի դալար դեղեցիկ ծառերը՝ մուգ կանաչ, կոշտ տերեփներով ու անթիվ, անուշտհոտ, դեռ չհասած պտուղներով:

Հրանտն ու Վազգենը քորում եյին մոծակներից խայթած մարմինները, յերեսը:


— Հրա՛նտ, Վազգե՛ն, դուք դպուշացեք մոծակների խայթելուց: Ջերմով կբռնվեք, տարություն կունենաք: Մոծակները ջերմ ու տենդ տարածողներ են:

— Այս պաղատու, գեղեցիկ վայրերում մոչ մի մոծակ չպիտի մնա, ասաց բժշկիկը:

— Կոտորել, վոչնչացնել այդ վնասակար մոծակներին, — բուռնցքը սեղմելով ասաց Վազգենը:

Մի քանի սր հետո հայրիկը, բժիշկը, գյուղատնտեսուհի և կուլանտեսականները հավաքվեցին ճակատ լճի ափին: Բժիշկը և հայրիկը լճից առկառով ջուր վերցրին և մանրադիտակով դննեցին, հետո բարձր ել մանրադիտակով նայեցին ջրի մեջ — Գ՛) տակոսով ջուրը մաքրված եր մոծակների ձվերից:

Հրանտն ու Վազգենը նույնպես մանրադիտակով նայեցին ջրի մեջ. ինչ հետաքրքիր եր, նրանք շարժվող կետեր ելին տեսնում ջրի մեջ:



Նկ. 13. Վնասատուներին վոչնչացնում են: Սավառակով բույն են քափում հսկիհների վրա:

Կապույտ յերկնահամարի վրա յերեկաց սավառնակը, վո՛ր իջավ լճի ջրերի վրա և քիմիական թույն թափեց այդ տեղերում:

— Վնասակար մոծակներին կոտորում են թույնով ու մաքուրով, — ուրախ կանչում եր Հրանտը:

— Իսկ գամբուզիա ձկնիկներն ամենից շատ մո-

ծակներ են վռնչաացնում... Գնանք մանրագիտակով
նայենք առվի ջրերի մեջ:

— Նկատելի կերպով մոծակների թիվը պակասել
է. շուտով բոլոր մոծակներին կվռնչաացնենք, — ա-
սաց հայրիկը:

Հրանան ու Վաղդենը մյուս յերեխաների հետ վա-
զեցին սավաննակի մոտ և ուշադրությամբ դիտում
էին:

Սալառնակը գործը վերջացրած՝ բարձրացավ
վեր, ափելի վեր. լսվում էր մոտորի հաճելի աղմուկը:

Արեվը պայծառ բուսավորում էր: Նրանց շուրջը
փռված ծաղիկներն անուշ բուբում էին, կապույտ
ծովը տարածվել էր հեռո՛ւն-հեռո՛ւն:



Յ Ա Ն Կ

1. Նամակ Բաթումից	3
2. Անուշահամ ցիտրուսները	4
3. Փոքրիկ հյուրերը ցիտրուսային խորհրդային տնտեսությունում	6
4. Թեյի դաշտերում ու դործարանում	9
5. Բամբուկ	12
6. Տունգա	19
7. Կեղեվաթել	20
8. Եվկալիպտ	23
9. Սեվ ծովի ավերին	28
10. Ծովային խխունջներ	31
11. Մեղուղա	34
12. Վնասատուներին վնջնչացնում են	36



Մժբադրեց՝ Մ. Դուրդարյան
Տեխ. իմք. Ան. Կասպարյան
Արբադրիչ՝ Հ. Մանուկյան

Գրավիտի լիպոթ Կ— 4658. Հրատ. 4328.

Պատվեր 26. Տիրաժ 3000

Թուղթ 62×94. Տպ. 2 $\frac{1}{2}$ մամուլ.

ՄԼԿ մամ. 24·480 նիշ. Հեղինակային 1 $\frac{3}{8}$ մամ.

Հանձնված և արտադրության 1937 թ. սեպտ. 9.

Ստորադրված և ապագրության 1938 թ. փետր. 21

ԳԻՆԸ 1 թ. 50 ԿՈՊ.


ՊԵՏՀՐՈՍԻ 1 ՏՊԱՐԱՆ, ՅԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ ՓՈՂ. 65

ԳԼԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010877

ԳՐԱԵ 1ՈՒ 504.



15693

МАРГАРИТ
СОХРОВИЩА КОЛХИДЫ
ГИЗ АРМ ССР ЕРЕВАН